

**ԻՐԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ
ՆԿԱՏՄԱՄԲ (2010-2016 ԹԹ.)**

«Ալիևների՝ իշխանության գալուց հետո Ադրբեջանը սկսել է վարել հակակրոնական քաղաքականություն՝ թույլ չտալով, որպեսզի բնակչության շրջանում ամրապնդվի իսլամական-շիական ինքնությունը: Վերջին փարիներին Ադրբեջանում առաջացել է պանազարիական գաղափարախոսություն, որի նպատակը «Մեծ Ադրբեջան» ստեղծելն է, որի մեջ ընդգրկված են նաև Իրանի թյուրքախոս նահանգները: Իրանի Իսլամական Հանրապետության պետական բոլոր կառույցները պետք է լուրջ ընդունեն Ադրբեջանում ընթացող զարգացումներն ու կանխատեսեն բոլոր զարգացումները, որպեսզի որևէ սցենարի իրագործման պարագայում Իրանի ազգային շահերն արդարացիորեն պաշտպանվելու համար իշխանությունները պատրաստ լինեն համարժեք գործողություններ իրականացնելու», - նշված է Իրանի Մեջլիսի Հետազոտությունների կենտրոնի՝ 2013 թ. հրապարակած զեկույցում¹:

Նույն թվականին Իրանի գործող նախագահ Հասան Ռոհանին նախագահական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակ, գնահատելով Ադրբեջանից սպասվող վտանգները, հայտարարել էր, որ Ադրբեջանն Իրանի համար վերածվել է անվտանգության սպառնալիքի²:

Ադրբեջանի անկախության հռչակումից հետո Իրանի Իսլամական Հանրապետության կողմից հնչեցին այդ նորաստեղծ պետության հետ շիականության հենքի վրա կրոնական-գաղափարախոսական համե-

¹ روابط جمهوری اسلامی ایران و جمهوری آذربایجان؛ چالشها و فرصت ها

(Իրանի և Ադրբեջանի հարաբերությունները. Մարտահրավերներ և հնարավորություններ):

<http://rc.majlis.ir/fa/news/show/847265>

² جمهوری آذربایجان، بدون اغراق، به خطر امنیتی برای ایران تبدیل شده است.

(Ադրբեջանն առանց չափազանցության՝ Իրանի համար վերածվել է անվտանգության սպառնալիքի):

<http://www.irdiplomacy.ir/fa/page/1916649/>

րաշխության կոչեր, որոնք, սակայն, միանշանակ չընդունվեցին Բաքվի կողմից, որը Թեհրանի այդ կոչերն ընկալեց որպես Իրանի կողմից նորանկախ պետության ներքին գործերին միջամտելու փորձ³:

Ըստ այդմ, Ադրբեջանի իշխանություններն Իրանի կողմից իրակա-նացվող կրոնական քարոզչության ծավալմանը հակազդելուն ուղղված որոշակի քայլերի դիմեցին, որոնք Թեհրանի կողմից գնահատվեցին որպես անընդունելի, ավելին՝ իր պետական շահերի տեսակետից վտանգավոր դիրքորոշում:

1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո տարածաշրջանում գերակա դիրք ձեռք բերելու նպատակով հեղափոխության արտահան-ման հարցն ընդգրկվեց Թեհրանի արտաքին քաղաքականության օրակարգում, որն էլ հանդիսացավ Իրանի և Ադրբեջանի միջև միջ-պետական հարաբերությունների լարվածության հիմնական պատճառ-ներից մեկը:

Ազդեցիկ հոգևորական, Փորձագետների խորհրդի փոխնախագահ Հաշեմի Շահհուդին 2011 թ. ԻԻՀ Մեջլիսի «Իսլամական զարթոնք» խմբակցության անդամների հետ հանդիպման ժամանակ, ներկայաց-նելով երկրի կրոնական քաղաքականության առաջնահերթություն-ները, մասնավորապես նշել է. «Իրանը, որը հեղափոխության ռազ-մավարության և գաղափարախոսության դերակատարներից մեկն է, առայժմ հետ է մնում տարածաշրջանի որոշ երկրներից: Իրանի նպա-տակն այլևս այն չէ, որ իսլամական հեղափոխության գաղափարա-խոսությունը սահմանափակվի միայն Իրանի աշխարհագրական սահ-մաններում, այլ ԻԻՀ հիմնադիր Իմամ Խոմեյնիի հիմնական նպա-տակն այն էր, որպեսզի իսլամը վերածնվի և իշխի ամբողջ աշխար-հում»⁴:

Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Ալլահշյուբուր Փաշազադեն, իր մտավախությունը հայտնելով Թեհրանից հնչած

³ Բայբուրդյան Վ., Իրան-Ադրբեջան, հարևաններ, թե՛ աշխարհաքաղաքա-կան և աշխարհատնտեսական ակոյաններ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2003, 22, էջ 29:

⁴ آیت‌الله هاشمی شاهرودی: احیای اسلام در جهان هدف اصلی امام بود

(Այաթոլլա Շահհուդի. Աշխարհում իսլամի վերածնունդն Իմամ Խոմեյնիի հիմ-նական նպատակն էր):

<http://www.farsnews.com/newstext.php?nn=13900602182517>

նմանօրինակ հայտարարությունների կապակցությամբ, իսլամական հեղափոխությանը հաջորդած առաջին տարիներին հայտարարել էր, որ Իմամ Խոմեյնիի գաղափարների ազդեցությունը նկատելի է նաև Ադրբեջանցի շիաների շրջանում⁵:

Այդ տեսակետն ավելի ամրակայվեց ավելի ուշ, հատկապես այն բանից հետո, երբ Ադրբեջանում ստեղծվեց Ադրբեջանի իսլամական կուսակցությունը (ԱԻԿ), որն աչքի էր ընկնում իրանամետ կեցվածքով՝ իր վրա կրելով ԻԻՀ հիմնադիր Իմամ Խոմեյնիի գաղափարների ազդեցությունը:

Ադրբեջանի աշխարհիկ իշխանությունները չհանդուրժելով ԱԻԿ-ի քարոզած գաղափարների տարածումն ու հակաարևմտյան դիրքորոշումը, ի վերջո 1996 թ. արգելեցին կուսակցության գործունեությունը, իսկ նրա ղեկավար կազմի և այլ ազդեցիկ անդամների մի մասը ձերբակալվեց, ոմանք էլ՝ արտաքսվեցին երկրից⁶:

Անցնող տարիների ընթացքում Ադրբեջանի իշխանությունները, վախենալով երկրում Իրանի Իսլամական Հանրապետության մոդելի՝ շիիզմի գաղափարախոսության վրա հիմնված համակարգի ձևավորումից, սահմանափակեցին շիական խմբավորումների գործունեությունը և Իրանից սպասվող հնարավոր սպառնալիքը չէզոքացնելու նպատակով տարբեր օղակների միջոցով սկսեցին վարել հակաիրանական քաղաքականություն⁷:

کيهان فر، عباس: نگاهی به جمهوری مسلمان نشین آذربایجان (2)، فصلنامه "مشکوه"، شماره 41، تهران 1374، صفحه 110

(Քեյհան Ֆար Աբբաս, Հայացք Ադրբեջանի մուսուլմանաբնակ հանրապետությանը (2), «Մաշքուի» գիտական հոդվածների ժողովածու, պրակ 41, Թեհրան, 1993, էջ՝ 110):

محمد زاده، حزب اسلام جمهوری آذربایجان از پشتیبانی مردمی تا فشارهای حکومتی، مجله "فلسفه و کلام"، تهران 1389، شماره 595، صفحه 64

(Մոհամմադ Զադե, Ադրբեջանի իսլամական կուսակցությունը. Ժողովրդի աջակցությունից մինչև իշխանությունների ճնշումները, «Ֆալսաֆե վա քալամ» գիտական հոդվածների ժողովածու, պրակ 595, Թեհրան, 2010, էջ 64):

عرب عامری،جواد، شیعیان جمهوری آذربایجان قبل و بعد از فروپاشی شوروی/ روزگاران سخت، مجله "زمانه"، شماره 104، تهران 1390، صفحه 63

(Արաբ Ամերի Զավադ, Ադրբեջանի Հանրապետության շիաները ԽՍՀՄ փլուզումից առաջ և հետո. Ծանր ճակատագիր, «Զամանե» գիտական հոդվածների ժողովածու, պրակ 104, Թեհրան, 2011, էջ 63)

Ադրբեջանի իշխանությունների՝ իսլամական (շիական) ուժերի նկատմամբ իրագործած բռնաճնշումները Թեհրանին ստիպեցին Ադրբեջանի նկատմամբ վարած կրոնական քաղաքականության մեջ մարտավարական փոփոխություններ իրականացնել:

1997 թ. Մոհամմադ Խաթամին, ընտրվելով Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ, փոփոխության ենթարկեց երկրի արտաքին քաղաքականության ռազմավարությունը: Նա իսլամական հեղափոխության արտահանման տեսությունը փոխարինեց քաղաքակրթությունների երկխոսության գաղափարով, որը ենթադրում էր մուսուլմանական երկրների հետ իսլամական ընդհանրության գործոնը փոխարինել մշակութային գործոնով⁸:

2010-2016 թթ. Ադրբեջանի նկատմամբ Իրանի վարած կրոնական քաղաքականության շեշտադրումները ոչ միայն պայմանավորված էին նախագահներ Մահմուդ Ահմադինեժադի և Հասան Ռոհանիի պահպանողական և բարեփոխական հայացքներով, այլև այդ քաղաքականության մշակման վրա զգալի ազդեցություն ունեին տարածաշրջանում տեղի ունեցած զարգացումները:

Հատկապես 2010-2013 թթ., միջուկային ծրագրով պայմանավորված, Արևմուտքն Իրանի նկատմամբ ճնշումները գնալով ավելի էր ուժեղացնում, միևնույն ժամանակ մեծանում էր նաև ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից Իրանի՝ միջուկային խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու սպառնալիքը, ինչի հետևանքով Թեհրանի դիրքերը զգալիորեն թուլացել էին, և երկիրը հայտնվել էր միջազգային մեկուսացման մեջ: Իսկ Ադրբեջանը, վայելելով Թուրքիայի, Միացյալ Նահանգների ու Իսրայելի աջակցությունը, իր հակաիրանական գործողություններով սպառնում էր Իրանի տարածքային ամբողջականությանն ու ազգային անվտանգությանը:

Ադրբեջանի և Իսրայելի միջև 2012 թ. սկզբին 1,6 միլիարդ ԱՄՆ դոլար արժողությամբ ռազմական տեխնիկայի վաճառքի շուրջ ձեռք բերված պայմանավորվածությունից հետո, հակառակ պաշտոնական

⁸ Բայբուրդյան Վ., Իսլամը և նրա գաղափարական-քաղաքական դրսևորումներն մահմեդական պետությունների քաղաքականության մեջ և միջազգային հարաբերություններում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2006, 25, էջ 35-37:

Բաքվի հավաստիացումներին՝ Թեհրանը մտահոգված էր, որ Իսրայելի կողմից Իրանի վրա հնարավոր ռազմական հարձակման դեպքում Ադրբեջանի տարածքը կարող է օգտագործվել որպես հարձակման հարթակ⁹:

Հետևաբար, ստեղծված բարդ իրավիճակում Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու և այդ երկրից սպասվող սպառնալիքները չեզոքացնելու նպատակով Իրանը որպես ազդեցիկ լծակ ընտրեց կրոնական գործոնը:

ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի պաշտոնավարման առաջին շրջանում (1997-2005 թթ.) որոշակի նահանջ տեղի ունեցավ Խաթամիի որդեգրած քաղաքակրթությունների երկխոսության քաղաքականությունից, և վերստին ուժեղացան շեշտադրումներն իսլամական հեղափոխության արտահանման քաղաքականության վրա, որոնք անխուսափելիորեն ազդելու էին Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա: Թեհրանում Ադրբեջանի Հանրապետությանը դիտում էին որպես Իրանի Իսլամական Հանրապետության նկատմամբ թշնամական դիրքորոշում ունեցող երկրի:¹⁰

Հարկ է նշել, որ Մահմուդ Ահմադինեժադի պաշտոնավարման երկրորդ շրջանում (2009-2013 թթ.) Իրանն Ադրբեջանի նկատմամբ վարում էր շեշտված կրոնական քաղաքականություն՝ կոշտ դիրքորոշում որդեգրելով Բաքվի հակաշիական քաղաքականության ցանկացած դրսևորման նկատմամբ: Այդ ընթացքում Ադրբեջանի նկատմամբ Ահմադինեժադի կառավարության վարած արտաքին քաղաքականության վրա նկատելի էր պահպանողական հայացքներ ունեցող հոգևորականների ու քաղաքական ուժերի ազդեցությունը, որոնք ԱՀ իշխանությունների հանդեպ ընդգծված կոշտ դիրքորոշում ունեին՝ կապված Ադրբեջանում շիաների նկատմամբ գործադրվող բռնաճնշումների և Բաքու-Թեյ Ավիվ ռազմավարական հարաբերությունների հետ:

Արաբական մի շարք երկրներում սկիզբ առած հեղափոխական

⁹ Will an Israeli strike on Iran come from Azerbaijan?

<http://www.globalpost.com/dispatch/news/regions/middle-east/121101/israeli-iran-azerbaijan-nuclear>

¹⁰ حسین احمدی، جمهوری آذربایجان (23 سال تکاپو برای دولت و ملت سازی)، تهران 1394، صفحه 332
(Ահմադի Հոսեյն, Ադրբեջանի Հանրապետություն, 23 տարվա փնտրուոք ազգ և պետություն ստեղծելու համար, Թեհրան, 2015, էջ 332)

շարժումների («Արաբական գարուն») տարածումը երկիր կանխելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները շիական ակտիվ շրջանակների գործունեությունը սահմանափակելու ուղղությամբ կանխարգելիչ միջոցառումներ իրականացրեցին:

Մասնավորապես 2010 թ. Ադրբեջանի կառավարության որոշմամբ՝ դպրոցներում աշակերտուհիներին արգելվեց հեջաբ կրել¹¹: Որպես ճնշման միջոց՝ Իրանը հեջաբի արգելքի հետ կապված Ադրբեջանի իշխանություններին ուղղված քննադատությանը զուգահեռ «մեսիջներ» էր հղում իշխանություններից դժգոհ շիա հավատացյալներին՝ կոչ անելով պայքարել իրենց կրոնական իրավունքների համար:

Արևմտյան Ատրպատական նահանգում ԻԻՀ հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ Ղուլամոեզա Հասանին իր ուրբաթօրյա աղոթքներից մեկի ժամանակ, քաջալերելով իրենց իրավունքների համար պայքարող ադրբեջանցի շիա հավատացյալներին, հայտարարեց, որ Ադրբեջանի ժողովրդի փրկության միակ ճանապարհն իսլամական սկզբունքներին վերադառնալն է՝ միևնույն ժամանակ նրանց կոչ անելով իշխանությունների իրականացրած բռնությունների դեմ պայքարում որպես օրինակ դիտարկել Իրանի իսլամական հեղափոխությունը¹²:

Ադրբեջանը, մտահոգվելով Իրանում կրթություն ստացած ադրբեջանցի հոգևորականների գործունեությամբ, 2009 թ. օրենք ընդունեց, համաձայն որի՝ օտարերկրացի գիտնականներին, ինչպես նաև արտերկրում կրթություն ստացած Ադրբեջանի քաղաքացիություն ունեցող հոգևորականներին արգելվեց կրոնական քարոզչություն իրականացնել երկրում¹³:

Այդ առնչությամբ Ադրբեջանի Մեջլիսի պատգամավոր Ֆազալիլ

¹¹ Принятое решение о запрете хиджаба в средних школах будет исполнено – Министр.

<http://1news.az/society/20101229123508668.html>

¹² تنها راه نجات مردم جمهوری آذربایجان را بازگشت به اصل اسلام است

(Ադրբեջանի Հանրապետության ժողովրդի փրկության միակ ճանապարհն իսլամի սկզբունքներին վերադառնալն է):

<http://fa.arannews.com/?MID=21&Type=News&TypeID=1&id=30297>

¹³ Милли Меджлис Азербайджана принял закон, запрещающий деятельность незарегистрированных религиозных общин

<http://ru.apa.az/news/134427>

Աղամալին հայտարարեց, որ կրոնի ոլորտում ամենամեծ սպառնալիքն Իրանից է սպասվում՝ առաջարկելով Իրանի Ղոմ քաղաքում կրոնական ուսում ստացած ադրբեջանցի հոգևորականների գործողությունները խիստ վերահսկել:

2011 թ. Արևելյան Ատրապատական նահանգում ԻԻՀ հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ այաթոլլահ Մոջթահեդ Շաբեսթարին Կովկասի մահմեդականների վարչության ղեկավար Ալլահշյուքուր Փաշազադեին ուղղված քննադատական հայտարարությամբ անընդունելի էր համարել Ադրբեջանում հեջաբի արգելման առնչությամբ նրա լուսությունը: Շաբեսթարիի հայտարարության հետ կապված ադրբեջանական ՋԼՄ-ները գրեցին, թե Իրանի հոգևորականությունը նպատակ ունի «օրենքից դուրս» համարել Փաշազադեի լիազորությունները, քանի որ վերջինս հեջաբի արգելման, ինչպես նաև Իսլամական կուսակցության ղեկավարի ձերբակալման հարցում պաշտպանել էր ԱՀ իշխանությունների դիրքորոշումը¹⁴:

Հեջաբ կրելու արգելքին զուգահեռ Ադրբեջանի իշխանությունները սկսեցին սահմանափակել նաև շիական մզկիթների գործունեությունը, որը բացատրվում էր 2009 թ. տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններով¹⁵:

Եթե հեջաբի դեպքում Իրանը սահմանափակվում էր սուկ քննադատությամբ, ապա մզկիթները քանդելու առնչությամբ Իրանը սկսեց արդեն սպառնալ Ադրբեջանին: Օրինակ՝ 2010 թ. մայիսին իրանցի բարձրաստիճան ազդեցիկ հոգևորական այաթոլլահ Մաքարեմ Շիրազին Իլիամ Ալիևին սպառնաց, որ եթե Ադրբեջանում շարունակվի մզկիթների քանդելու գործընթացը, ապա Իրանի բարձրաստիճան հոգևորականությունը պայքարի ֆեթվա կարձակի և, այն մարդը, որն այդ ճանապարհին կզոհվի, շահիդ կհամարվի¹⁶:

¹⁴ Тегеран хочет избавиться от шейха мусульман Кавказа
<http://www.panorama.am/ru/news/2011/02/14/iran-azerbayjan-pashazade/990763>

¹⁵ Տե՛ս Փաշայան Ա., Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, Երևան, 2014, էջ 59-61:

¹⁶ Տե՛ս ' قدرتنامی شیعیان آذربایجان در برابر پروژہ تخریب مساجد (Ադրբեջանի շիաները մզկիթների քանդման նախագծի դեմ իրենց պայքարի ուժն են ցուցադրում):
<http://www.tabnak.ir/fa/news/99473/>

2011 թ. օգոստոսին ԻԻՀ ՁՈԻ ԳՇ պետ, բրիգադի գեներալ Սեյյեդ Հասան Ֆիրուզբադին էլ բացահայտ սպառնաց պաշտոնական Բաքվին՝ նախազգուշացնելով Իլիամ Ալիևին, որ «եթե ժողովրդի զարթոնքին բիրտ ուժով պատասխանի, ապա իր վերջը սև է լինելու»¹⁷:

Իրանցի հոգևորականների՝ Ադրբեջանի շիաների վրա ունեցած ազդեցությունը թուլացնելուն ուղղված ԱՀ կառավարության մյուս որոշման համաձայն՝ Ադրբեջանում կրոնական բովանդակությամբ գրքեր վաճառելու համար անհրաժեշտ էր ստանալ արդարադատության նախարարության թույլտվությունը¹⁸: Ադրբեջանում արգելված հեղինակների շարքում են այնպիսի իրանցի հայտնի հոգևորականներ, ինչպիսիք են՝ այաթոլլահ Մաքարեմ Շիրազին, Շեյխ Աբբաս Ղոմին, այաթոլլահ Ֆազել Լանքարանին, Ջաաֆար Սաջանին և այլն:

Տեսնելով, որ իրանական ազդեցությունն օրեցօր ավելի է մեծանում՝ Իրանի կրոնական քաղաքականությանը հակազդելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները դիմեցին առավել կտրուկ միջոցների՝ 2011 թ. դեկտեմբերին Իրանի հեռուստառադիոընկերության Բաքվի բաժանմունքի տնօրեն Ահմադ Քազեմիին իր ընտանիքի հետ միասին վտարելով Ադրբեջանից¹⁹:

Իրանի հյուսիսային նահանգներում ԻԻՀ հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ-հոգևորականների քննադատությունները լռեցնելու նպատակով 2011 թ. հոկտեմբերին Ադրբեջանի ՆԳ նախարարության ներգաղթյալների և օտարերկրացիների հարցերով վարչության աշխատակիցները հարձակվեցին Բաքվում Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խա-

¹⁷ هشدار فیروزآبادی به رئیس جمهور آذربایجان شد؟

(Ֆիրուզբադիի նախազգուշացումն Ադրբեջանի Հանրապետության նախագահին):

<http://www.tabnak.ir/fa/print/182622>

¹⁸ Получившие образование за рубежом не смогут вести церемонии и совершать обряды в Азербайджане

<http://ru.apa.az/news/305277>

¹⁹ چرا نماینده صدا و سیماى ایران از آذربایجان اخراج شد؟

(Ինչո՞ւ Իրանի հեռուստառադիոընկերության ներկայացուցիչն Ադրբեջանից արտաքսվեց):

<http://www.tabnak.ir/fa/news/209615/>

մենեի գրասենյակի վրա՝ պատճառելով զգալի նյութական վնաս²⁰:

Իսկ 2012 թ. մայիսին Ադրբեջանի իշխող կուսակցության (ենի Ադրբեջան) ենթակայությամբ գործող ուժերն Ադրբեջանում Իրանի դեսպանության շենքի առջև կազմակերպած ցույցի ժամանակ Իրանի հոգևոր առաջնորդի հասցեին վիրավորական հայտարարություններ հնչեցրին՝ պարզելով նույնաբովանդակ պաստառներ²¹:

Ի նշան բողոքի, Ադրբեջանում Իրանի դեսպան Մոհամմադ Բադեր Բահրամին լքեց Ադրբեջանը՝ միջադեպի շուրջ խորհրդակցություններ անցկացնելու նպատակով վերադառնալով Իրան, իսկ Իրանի ԱԳՆ կանչվեց Իրանում Ադրբեջանի դեսպան Ջավանշիր Ախունդովը: Այի Խամենեիի հասցեին վիրավորական հայտարարություններ հնչեցնելու փաստի առնչությամբ՝ Իրանի արտգործնախարարությունը բողոքի նոտա հղեց Ադրբեջանին՝ պահանջելով կրոնական սրբություններն անարգողներին պատժել և այդ գործի առնչությամբ մանրակրկիտ քննություն իրականացնել²²:

2013 թ. Ադրբեջանի իշխանությունների որոշմամբ դադարեցվեց Իմամ Խոմեյնիի անվան օգնության կոմիտեի գործունեությունը, որն Ադրբեջանի անկախացումից ի վեր այդ երկրում բարեգործական զանազան ծրագրեր էր իրականացնում:

Ադրբեջանում ընդդիմադիր ուժերի գործունեության նկատմամբ սահմանված խիստ վերահսկողության պայմաններում, միակ հարթակը, որտեղ իշխանություններից դժգոհ քաղաքացիները կարող են բարձրաձայնել իրենց մտահոգությունների մասին, կրոնական կառույցներն են²³:

²⁰ تعرض به دفتر نمایندگی ایران در باکو

(Հարձակում՝ Քարվում Իրանի ներկայացուցչության գրասենյակի վրա):

<http://www.farsnews.com/printable.php?nn=13900710001306>

²¹ В Баку перед посольством Ирана прошла многочисленная акция протеста

<http://1news.az/region/20120511051108807.html>

²² سفیر جمهوری آذربایجان به وزارت خارجه احضار شد

(Ադրբեջանի Հանրապետության դեսպանը կանչվել է ԻԻՀ ԱԳ նախարարություն):

<http://www.dolat.ir/NSite/FullStory/News/?Serv=0&Id=215528>

²³ Ст'и От власти до тюрьмы: как живет политическая оппозиция в Азербайджане <http://rustoria.ru/post/ot-vlasti-do-tyurmy-kak-zhivet-politicheskaya-oppozi->

Կրոնական գործիչների գործունեությունը վերահսկելու նպատակով Ադրբեջանի կրոնական կազմակերպությունների հարցերով պետական կոմիտեին ԱՀ իշխանությունները տվեցին լայն լիազորություններ, և 2016 թ. օգոստոսին վերջինիս կայացրած որոշման համաձայն՝ արգելվում է հասարակական վայրերում կազմակերպել կրոնական հավաքներ, իրականացնել շիական ծիսակարգեր, օգտագործել կրոնական արեստուարներ և այլն:

Ինչպես հայտնի է, Ադրբեջանը՝ որպես Իսլամական համագործակցության կազմակերպության անդամ (ԻՀԿ), օգտվելով այդ կարգավիճակից, միջազգային հարթակներում իսլամական երկրների աջակցությունն օգտագործում է իր քաղաքական նպատակներին հասնելու համար: Բաքվին այդ հարցում հատկապես մեծ աջակցություն են ցուցաբերում Սաուդյան Արաբիան և նրա ռազմավարական դաշնակից Թուրքիան: Էր Ռիադը, կարելի է ասել, թշնամական հարաբերություններ ունի Թեհրանի հետ, իսկ Անկարան տարածաշրջանում համարվում է Թեհրանի մրցակիցն ու, մի շարք գործոններով պայմանավորված, նրա հետ ունի խիստ լարված հարաբերություններ: Ի դեպ, հենց այդ երկրների ջանքերով է, որ ԻՀԿ շրջանակներում հակաիրանական բազմաթիվ բանաձևեր են ընդունվում:

Իսլամական աշխարհի նկատմամբ Ադրբեջանի վարած երկակի քաղաքականության մասին բարձրաձայնելու, ինչպես նաև Բաքվի վրա ճնշում գործադրելու նպատակով 2011 թ. Իրանը «Իսլամական զարթոնքն Ադրբեջանում» թեմայով միջազգային համաժողով կազմակերպեց, որին մասնակցեցին ավելի քան 40 իսլամական երկրի հոգևորականներ և գիտնականներ: Համաժողովի ավարտին մասնակիցներն ընդունեցին համատեղ հայտարարություն՝ դատապարտելով Ադրբեջանի վարած հակաիսլամական քաղաքականությունը²⁴:

Ինչպես միջազգային համաժողովների շրջանակներում, այնպես էլ երկկողմ պաշտոնական հանդիպումների ժամանակ Իրանը բարձրա-

[ciya-v-azerbajdzhane/](#)

آیت الله تحریری : دولت باکو به ممنوعیت حجاب پایان داده و معترضان زندانی را آزاد کند²⁴

(Այաթոլլահ Թահիրիի, Բաքուն պետք է հեջաբի արգելման գործընթացին վերջ դնի և բանտարկված ցուցարարներին ազատ արձակի):

http://fa.arannews.com/mobile/?m_t=news&Type=News&id=26098

ձայնում է Ադրբեջանի հակաշիական գործողությունների մասին: Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին 2016 թ. փետրվարի 23-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ հանդիպմանը, ակնարկելով Ադրբեջանի վարած հակաշիական քաղաքականության մասին, նախազգուշացրեց. «Շիական դավանանքն Ադրբեջանի ժողովրդի հարստությունն է, ինչքան կառավարությունն ավելի մեծ ուշադրություն ցուցաբերի ու հարգի կրոնական ավանդույթներն ու գաղափարները, այնքան կառավարության հանդեպ ժողովրդի աջակցությունն ավելի մեծ կլինի»²⁵:

Ինչպես նշվեց վերևում՝ ԻԻՀ նախագահի պաշտոնում Մահմուդ Ահմադինեժադին փոխարինած Հասան Ռոհանին, որն աչքի է ընկնում իր բարեփոխական հայացքներով, վերանայեց Բաքվի նկատմամբ նախկին իշխանությունների վարած ընդգծված կոշտ քաղաքականությունը:

Սակայն այդուհանդերձ պետք է ընդգծել, որ Ադրբեջանի նկատմամբ Թեհրանի վարած կրոնական քաղաքականությունը հիմնարար փոփոխության չի ենթարկվել, պարզապես իրավիճակով պայմանավորված փոխվում են դրա իրականացման եղանակները:

Բանն այն է, որ կրոնական քաղաքականության վերանայումը պայմանավորված չէր Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում արմատացած խնդիրների լուծմամբ, պարզապես համաշխարհային և տարածաշրջանային զարգացումներով պայմանավորված նոր իրավիճակ էր ստեղծվել, որն էլ Թեհրանի և Բաքվի միջև նոր համագործակցության հիմք հանդիսացավ:

Ստեղծված նոր պայմաններում, Իրանի իշխանությունները, մի կողմ դնելով առկա խնդիրները, որոշում կայացրին բարելավել Ադրբեջանի հետ հարաբերությունները: Թեհրանի առաջնային նպատակն առևտրական կապերի խորացման միջոցով տնտեսական շահույթ ստանալուց և այլընտրանքային ևս մեկ ճանապարհ բացելուց զատ՝

25 دیدار رئیس جمهوری آذربایجان با رهبر انقلاب

(Հեղափոխության առաջնորդի հանդիպումն Ադրբեջանի Հանրապետության նախագահի հետ):

<http://farsi.khamenei.ir/news-content?id=32380>

Ադրբեջանում Իրանի դիրքերի ամրապնդումն ու Բաքվին Թուրքիայի և Իսրայելի ազդեցության գոտուց դուրս բերելն էր:

Իրանի և «5+1 խմբի» միջև ձեռք բերված միջուկային համաձայնությունը զգալիորեն նվազեցրեց Իրանի վրա ռազմական հարձակում գործելու հավանականությունը, իսկ այդ պարագայում Ադրբեջանն իր հետաքրքրությունը կորցրեց Միացյալ Նահանգների և Իսրայելի մոտ:

Բացի այդ՝ նավթի ցածր գներով պայմանավորված Ադրբեջանում լարվածությունն առաջացավ ներքին կյանքում, միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները՝ այդ թվում Իրանի առաջատար հեռուստաընկերությունները կրկին սկսեցին բարձրաձայնել Ադրբեջանում մարդու իրավունքների, այդ թվում նաև բնիկ ժողովուրդների (թալիշներ, թաթեր, լեզգիներ) իրավունքների խախտումների մասին:

Հետևաբար վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով՝ Բաքուն որոշում կայացրեց անկանխատեսելի իրադարձություններից խուսափելու նպատակով գնալ Թեհրանի հետ տնտեսական փոխգործակցության:

Եթե Իրանի ներկայիս բարեփոխական իշխանությունը ձեռնպահ է մնում Ադրբեջանի հարցում խիստ դիրքորոշում հայտնելուց, ապա միանգամայն այլ մոտեցում ունեն հոգևոր դասի ներկայացուցիչները: Որպես դրա ցայտուն օրինակ կարելի է բերել հետևյալ փաստը՝ 2015 թ. նոյեմբերի 26-ին Ադրբեջանի՝ հիմնականում շիա հավատացյալներով բնակեցված Նարդարան ավանում ոստիկանական ուժերի և տեղացիների միջև տեղի ունեցած բախման հետևանքով զոհվեց 5 հավատացյալ և 2 ոստիկան: Նարդարանում կատարվածն անմիջապես հայտնվեց Իրանի կրոնաքաղաքական շրջանակների ուշադրության կենտրոնում: Իրանցի հոգևորականներն Ադրբեջանի իշխանություններին նախազգուշացրին տարածաշրջանի բռնապետերի ճակատագրից դասեր քաղել, հակառակ պարագայում Իլհամ Ալիևը ևս կարող էր կորցնել իշխանությունը: Իրանի Մեջլիսի ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հարցերով հանձնաժողովի փոխնախագահ Մանսուր Հադիդաթիուրը, խիստ քննադատելով Նարդարանի շիաների նկատմամբ կիրառված բռնությունը, տեղի բնակչությանը կոչ արեց «արթնանալ և առկա խնդիրների

վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտել»²⁶: Նարդարանի դեմ Ադրբեջանի իշխանությունների կատարած հարձակումն Իրանի համար այն «կարմիր գիծն» էր, որ նույնիսկ Ադրբեջանի հետ բարիդրացիական հարաբերությունների ձգտող Հասան Ռոհանի կառավարությունն ի զորու չեղավ տեղի չտալ մեծ ազդեցություն ունեցող հոգևորականների ճնշումներին և ստիպված եղավ քաղաքական մակարդակով արձագանքել նարդարանյան դեպքերին:

Իրանի հոգևոր դասի ներկայացուցիչներն Ադրբեջանի իշխանությունների հասցեին հնչեցրած քննադատություններից զատ՝ երբեմն ուշագրավ ուղեբժներ են հղում, որոնք բացահայտում են Իրանի կրոնական քաղաքականության երանգները: Արդաբիլ նահանգում Իրանի հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ, այաթոլլահ Սեյյեդ Հասան Ամելին իր ուրբաթօրյա աղոթքներից մեկի ժամանակ հայտարարել էր, որ ադրբեջանցին առաջին հերթին «Հոսեյնի» է (Իմամ Հոսեյնի գաղափարակից), հետո նոր ադրբեջանցի: Այաթոլլահ Ամելին իր երախտագիտությունն էր հայտնել Ադրբեջանի շիաներին, որոնք իշխանությունների իրականացրած աննախադեպ ճնշումների պայմաններում այնուամենայնիվ շիական ծիսակարգերն անցկացնում են²⁷:

Այսպիսով հեջաբ կրելու արգելքով, մզկիթների քանդման գործընթացով, իսլամական գործիչների ձերբակալությամբ և այլ գործոններով պայմանավորված Իրանը երբեմն բացահայտ, երբեմն քողարկված փորձել է միջամտել վերջին տարիներին Ադրբեջանում շիա հավատացյալների մասնակցությամբ տեղի ունեցած բողոքի ցույցերին:

Ադրբեջանի նկատմամբ Իրանի վարած կրոնական քաղաքականության առաջնահերթություններից մեկն էլ Ադրբեջանի վրա Սաուդ-

26 منصور حقیقت پور: دولت جمهوری آذربایجان، که شیعیان را اینگونه سرکوب می کند، این اقدام فرجام خوبی نخواهد داشت

(Մասնատր Հաղիղաթփուր, Շիաներին ճնշելու՝ Ադրբեջանի այս գործողությունները լավ ավարտի չեն կարող հանգել):

<http://fa.arannews.com/News/46865/>

27 آذری ها اول حسینی، سپس آذری هستند

(Ադրբեջանցիներն առաջին հերթին «Հոսեյնի հետևորդ են», հետո նոր ադրբեջանցի):

<http://isna.ir/news/95072312985/>

յան Արաբիայի և Թուրքիայի ունեցած կրոնական ազդեցության թուլացումն է:

Ինչպես նշում են իրանական աղբյուրները՝ թեև Ադրբեջանի բնակչության մեծամասնությունն իսլամի շիա ուղղության հետևորդ է, այդ երկրի իշխանությունները շատ հաճախ սուննիների և վահաբիների նկատմամբ ավելի բարեհաճ քաղաքականություն են վարում, քան շիաների, որոնց ակտիվ զանգվածների նկատմամբ բռնությունները կիրառվում են մինչ օրս:

Պարսից ծոցի արաբական միապետությունները, մասնավորապես Սաուդյան Արաբիան ու Քուվեյթն Ադրբեջանում Իրանի կրոնաքարոզչական գործունեությունը սահմանափակելու նպատակով անցնող տարիների ընթացքում ֆինանսական զգալի աջակցություն են ցուցաբերել Ադրբեջանի գիտական հաստատություններին ու այլ կենտրոններին, որոնց միջոցով էլ Ադրբեջանում տարածվում է վահաբական գաղափարախոսությունը: Ադրբեջանի իշխանություններին հղած իրանցի պաշտոնյաների քննադատական հայտարարություններում, ի թիվս բազում խնդիրների, արժարժվել է նաև վահաբիզմի հարցը:

ԻԻՀ ԱԳՆ մամլո խոսնակ Հոսեյն Ջաբերի Անսարին, 2016 թ. Փետրվարին, անդրադառնալով Ադրբեջանի ազգային անվտանգության նախարար Էլդար Մահմուդովի՝ վահաբիների հետ ունեցած սերտ համագործակցությանը, հայտարարեց, որ Իրանը պաշտոնապես հետաքննում է այդ հարցը՝ պարզելու թե որքանո՞վ է ադրբեջանցի նախարարի գործունեությունը սպառնացել Իրանի ազգային շահերին²⁸:

Ինչ վերաբերում է «Իսլամական պետություն» ահաբեկչական կազմակերպությանը՝ ապա 2015 թ. հուլիսին Ադրբեջանում Իրանի դեսպան Մոհսեն Փաքայինը, անդրադառնալով այդ կառույցի՝ Կովկաս մուտք գործելու հավանականությանը, նշել էր, որ Կովկասում «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման թիրախներից մեկը դա շիական Ադրբեջանի Հանրապետությունն է²⁹:

جابرى انصارى: رژیم صهیونیستی و برخی کشورهای منطقه به دنبال تشدید اختلافات

(Ջաբերի Անսարի, Սիոնիստական ռեժիմը (Իսրայել) և տարածաշրջանի այլ երկրները զբաղված են առկա լարվածության թեժացմամբ):

<http://www.irna.ir/fa/News/81954375/>

پاک آئین از ادامه روند مذاکرات ایران، ترکیه و آذربایجان خبر داد

Այդ առումով Իրանն Ադրբեջանի նկատմամբ իր կրոնական քաղաքականությունը մշակելիս հաշվի է առնում նաև «Իսլամական պետության» սպառնալիքն ու Ադրբեջանի տարածքից դրա հնարավոր մուտքն Իրան արգելափակելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր է ձեռնարկում:

Այսպիսով, ընդհանրացնելով վերևում ասվածը՝ հարկ է նշել, որ շիական երկրների, մասնավորապես Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ Իրանի վարած արտաքին քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից մեկն էլ կրոնական դիվանագիտությունն է:

Ուսումնասիրելով Ադրբեջանի նկատմամբ Իրանի վարած կրոնական քաղաքականությունը՝ նկատում ենք, որ Իրան-Ադրբեջան կրոնաքաղաքական հարաբերությունների հեռանկարի առնչությամբ Թեհրանը մի քանի սցենար ունի մշակած, որոնցից յուրաքանչյուրի ուղղությամբ համապատասխան շրջանակների միջոցով աշխատանքներ է տանում և, տվյալ պահին ստեղծված իրավիճակով պայմանավորված, առաջնահերթությունը տրվում է նախապես մշակված սցենարներից որևէ մեկին:

Ադրբեջանը Թուրքիայի ազդեցության գոտուց դուրս հանելու, ինչպես նաև դեպի Եվրոպա և Ռուսաստան այլընտրանքային ուղի ձևավորելու նպատակով Հասան Ռոհանիի կառավարությունը Բաքվի հետ հարաբերվելիս շեշտը դնում է տնտեսական հարաբերությունների խորացման վրա:

2010-2013 թթ. Իրան-Ադրբեջան խիստ լարված հարաբերությունների բարելավմանը Հասան Ռոհանիի նախագահության առաջին շրջանում նպաստեցին մի քանի գործոններ:

Ինչպես նշվեց՝ միջուկային համաձայնությամբ պայմանավորված Միացյալ Նահանգների և Իսրայելի օրակարգից դուրս եկավ Ադրբեջանի տարածքից Իրանի վրա ռազմական հարձակումը: Դրանով էլ պայմանավորված Ադրբեջանը Միացյալ Նահանգների և Իսրայելի համար որոշակի չափով կորցրեց իր նախկին ռազմավարական կարևորությունը:

(Փաթայինը տեղեկացրել է Ադրբեջանի, Իրանի և Թուրքիայի միջև ընթացող բանակցությունները շարունակելու մասին):

<http://isna.ir/fa/news/94041307509/>

Իրանն Ադրբեջանի հետ հարաբերությունները կառուցում է՝ հաշվի առնելով իր պետական շահերը: Հետևաբար ԻԻՀ ներկայիս ղեկավարության համար Իլհամ Ալիևի իշխանությունն այլևս չի ներկայացնում այն սպառնալիքը, ինչը նկատելի էր 2009-2013 թթ.:

Վերջին շրջանում նկատելի է, որ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ ակտիվացել է մի քանի ուղղություններով: Մի կողմից Իրանն իսլամական հեղափոխության սպառնալիքով փորձում է խոչընդոտել շիական շարժումները չեզոքացնելու Ադրբեջանի իշխանությունների քայլերին, իսկ մյուս կողմից էլ ադրբեջանամետ հայտարարություններով փորձում է գրավել ինչպես իշխանությունների, այնպես էլ շիական ակտիվ զանգվածի վստահությունը:

Եթե տարածաշրջանում իսլամական շարժումներով պայմանավորված այնպիսի իրավիճակ ստեղծվի, որի պայմաններում վտանգի տակ դրվի Իրանի ազգային անվտանգությունն ու տարածաշրջանում իր ներկայության իրավունքը, ապա կասկածից վեր է, որ Թեհրանը միանշանակ կօգտվի Ադրբեջանում իր ազդեցության տակ գործող շիական գործոնից և կփորձի Ադրբեջանում իշխանության բերել իրանամետ շիական ուժերին:

ISRAYELIAN ARMEN

IRAN'S RELIGIOUS POLICY TOWARDS AZERBAIJAN (2010-2016)

This article is about Iran's religious policy towards Azerbaijan during 2010-2016.

In 2009-2013 Iranian former president Mahmoud Ahmadinejad was serving his second term. Unlike Iran's President Hassan Rohani, Mahmoud Ahmadinejad had the support of conservative clergymen and political figures. Therefore, the conservatives had a great influence on his government's religious policy.

When looking through the official statements of the representatives of Iranian Embassy in Azerbaijan, Iranian official media, senior clerics, intellectuals and experts during the terms of the two presidents, one can notice that these statements fully reflect the distinct foreign policy of each president.

To prevent the establishment of Iran's model of governance based on the Shia ideology, Azerbaijani authorities restricted activities of Shia groups. Moreover, in order to neutralize the potential threat coming from Iran, Azerbaijan started to conduct anti-Iranian policy through its various bodies.

President Mahmoud Ahmadinejad had a strict stance towards Azerbaijan's such an anti-Shia policy. However, the current president of Iran has a more tolerant stance on this issue and does not criticize Azerbaijan for its anti-Shia policy since he has changed Iran's foreign policy towards Azerbaijan.